Համաձայնագիր-2
19.02.2021թ. կնքված N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1-5 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «7» հունվարի 2022թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է. Գևորգյանի մի կողմից, և «Դրուզյա» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս Ընկերության տնօրեն՝ Ա.Խաչատրյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ու 4-րդ ենթակետերով, և հիմք ընդունելով 19.02.2021թ. կնքված N ՀՀ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2021/1-5 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1. Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 9-րդ չափաբաժնի առավելագույն գինը ավելացնել 4 941 176 ՀՀ դրամով, այն սահմանելով 60 641 176 ՀՀ դրամ, իսկ ծառայության մատուցման ժամկետը (վերջնաժամկետը) երկարաձգել 30 օրացուցային օրով՝ այն սահմանելով մինչև 2022 թվականի փետրվարի 6-ը:

1.2. Պայմանագրի 4.1 կետով նախատեսված Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը ավելացնել 4 941 176 ՀՀ դրամով, այն սահմանելով 158 941 176 (հարյուր հիսունութ միլիոն ինը հարյուր քառասունմեկ հազար հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ:

1.3. Մատուցվելիք ծառայությունների դիմաց համապատասխան ֆինանսական միջոցներ հատկացվելուց հետո կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Դրուզյա» ՍՊԸ
ք.Երևան, Մ. Խորենացի 3,7	Ք.Տաշիր, Գետափնյա փ., տուն 15
ՀՎՀՀ 02647057	Հայբիզնեսբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011054013	Հ/Հ 1150017697737750
ՀՀ ՖՆ աշխատակազմի	ՀՎՀՀ 06957206
գործառնական վարչություն	տնօրեն
Գլխավոր քարտուղար	
Է. Գևորգյան _____	Ա.Խաչատրյան _____
/ստորագրություն/ Կ.Տ/	/ստորագրություն/ Կ.Տ/